ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի նիստի

Քաղաք Եղեգնաձոր **14 հոկտեմբեր 2022թ. ժամը՝ 11:00**

Մարզխորհրդի նիստը նախագահում է ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյանը: Քարտուղարում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի քարտուղարության պետ Հ.Ռուստամյանը:

Մարզխորհրդի նիստին մասնակցում են՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Դ. Սարգսյանը, Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դ. Հարությունյանը, Վայք համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյանը, Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյանը, Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Խաչատրյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա. Կարապետյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական Ա. Դավթյանը, ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության պետ Ա. Հակոբյանը, ՀՀ ՊՆ Զ ԵՎ ԶՀԾ Վայոց ձորի մարզային տարածքային ստորաբաժանման ղեկավար Ա. Նահապետյանը, ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ Հ. Սարգսյանը, ՀՀ ԱԱԾ ՎՁՄ վարչության պետ Կ. Միքաելյանը, Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազ Գ. Էլիզբարյանը:

Նիստի բացման խոսքով հանդես եկավ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը: Նա հայտնեց, որ 2022 թվականի սեպտեմբերի 25-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքում Արենի և Եղեգիս համայնքների ղեկավարները վերընտրվել են, շնորհավորեց այդ կապակցությամբ, միաժամանակ տեղեկացրեց, որ Եղեգիս համայնքի ղեկավարը բացակայում է հարգելի պատճառով: Նիստը իրավազոր է՝ մարզխորհրդի 7 անդամներից նիստին մասնակցում են 6-ը: Քննարկման դրեց մարզխորհրդի նիստի օրակարգի նախագծի հարցը: Առաջարկություններ, լրացումներ և դիտողություններ չհնչեցին: Մարզխորհուրդը հաստատեց նիստի օրակարգը միաձայն:

Օրակարգի առաջին հարց՝ 2022 թվականի սեպտեմբերի 13-ին ադրբեջանական ագրեսիայի հետևանքով մարզում ստեղծված իրադրության և ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ:

Նիստը նախագահող՝ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյանը, 2022թ. սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածքի նկատմամբ իրականացված ագրեսիայից հետո Վայոց ձորի մարզում ստեղծված իրավիճակի մասին ներկայացրեց ըստ ոլորտների.

Կրթության ոլորտ

Մարզում գործում է 48 հանրակրթական ուսումնական հաստատություն, որոնցից 34-ը միջնակարգ են, 14-ը՝ հիմնական: Դպրոցներից 12-ը գտնվում են լեռնային բնակավայրերում

(Արտավան, Բարձրունի, Գնդեվազ, Գողթանիկ, Գոմք, Հերհեր, Հերմոն, Հորբատեղ, Հորս, Խաչիկ, Սարավան, Քարագլուխ), 6-ը՝ բարձր լեռնային բնակավայրերում (Վարդահովիտ, Կարմրաշեն, Ջերմուկի թիվ 1, Ջերմուկի թիվ 3, Ջերմուկի կրթահամալիր, Մարտիրոս), և 12-ը՝ սահմանամերձ բնակավայրերում (Բարձրունի, Խնձորուտ, Սերս, Մարտիրոս, Խաչիկ, Արենի, Չիվա, Ելփին, Գոմք, Ջերմուկի թիվ 1, Ջերմուկի թիվ 3 Ջերմուկի կրթահամալիր):

Աշակերտների թիվը 6769 է, ուսուցիչների թիվը՝ 1046:

Դպրոցներում գործում է 17 նախակրթարան, որոնցում ընդգրկված է 133 երեխա:

Գործում է 17 մանկապարտեզ՝ 1248 երեխայի ընդգրկվածությամբ:

Բոլոր դպրոցներում սեպտեմբերի 1-ին մեկնարկել է նոր ուսումնական տարին գիտելիքի օրվան նվիրված տոնական միջոցառումներով և ուսումնական պարապմունքներն ընթանում էին բնականոն հունով:

Սակայն սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության պետական սահմանի արևելյան հատվածի ողջ երկայնքով իրականացված ագրեսիայի հետևանքով, որն ուղեկցվում էր ծանր հրետանու, հարվածային ԱԹՍ-ների կիրառմամբ, խաթարվեց ոչ միայն ազգաբնակչության բնականոն կյանքը, այլև հարվածի տակ հայտնված երեխաների կրթության իրավունքը: Ագրեսիայից հետո չեն գործել Ջերմուկ քաղաքի և Գնդեվազ գյուղի 4 դպրոցները և 2 մանկապարտեզները, քանի որ երեխաները տեղահանվել և բնակվել են մարզի ու հանրապետության համեմատաբար անվտանգ բնակավայրերում: Իրենց բնակավարերից տեղահանվել են 977 դպրոցահասակ աշակերտներ և մանկապարտեզներում ընդգրկված նախադպրոցական տարիքի 215 երեխաներ, որոնք փաստացի զրկված են կրթության իրավունքից: Թեև հաստատվել է փխրուն հրադադար, այնուամենայնիվ Նախիջևանին սահմանակից 8 բնակավայրերի (Բարձրունի, Խնձորուտ, Սերս, Մարտիրոս, Խաչիկ, Արենի, Չիվա, Ելփին) դպրոցներում ուսումնական պարապմունքներին աշակերտների հաճախումները կազմել են 40-50%, քանզի առկա է հակառակորդի կողմից հնարավոր ներխուժման սպառնալիք: Կրթության շարունակականությունն ապահովելու նպատակով աշխատանքներ են տարվել սպառնալիքի տակ հայտնված երեխաների կրթությունը հեռավար կազմակերպելու ուղղությամբ:

Ներկա պահին մարզում գրեթե վերականգնված է կրթական ամբողջ պրոցեսը: Գործում է Գնդեվազի դպրոցը առկա ուսուցմամբ հոկտեմբերի սկզբից, իսկ Ջերմուկի թիվ 1 և թիվ 3 դպրոցները 10.10.2022 թվականից հեռավարից անցել են առկա ուսուցման: Հոկտեմբերի 17-ից լիարժեք կգործի նաև Ջերմուկի կրթահամալիրը առկա ուսուցմամբ:

Վերականգվել է Զառիթափի մանկապարտեզի գործունեությունը, իսկ Ջերմուկի «Զատիկ» մանկապարտեզը առայժմ գործում է ոչ լիարժեք՝ 7 խմբի փոխարեն հաճախում է 2 խումբ: Ըստ նախնական համաձայնեցումների հոկտեմբերի 17-ից «Զատիկ» մանկապարտեզը կգործի ամբողջ ծավալով:

Քաղաքաշինության ոլորտ

2022թ. սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության պետական սահմանի արևելյան ուղղությամբ իրականացված ագրեսիայի

ընթացքում կիրառված ծանր հրետանու հարվածների հետևանքով վնասվել են նաև Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի քաղաքացիական շինություններ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի քաղաքաշինության վարչության և համայնքի համապատասխան մասնագետների կողմից կատարվել է տեղում ուսումնասիրություններ քաղաքացիական շինությունների վնասների արձանագրման նպատակով: Ներկայումս կատարվել է արձանագրված վնասների ֆինանսական գնահատման գործընթաց համայնքային և մարզային հանձնաժողովների կողմից:

Ագրեսիայի ժամանակ վնասվել է ստորև ներկայացված գույքը:

Հ/հ	Բնակա-վայր	Հասցե, նշանակություն, համառոտ նկարագիր	Սեփականատեր պետական/ համայնքային/ սեփականատեր (ֆիզ. անձ)	Վնասվածքների ընդհանուր նկարագրություն
1	Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ	Ձախափնյակ, 1 Բ Վարչական շենք, կարկասային, երկլանջանի տանիքով	Պետական	Արկի բեկորներից վնասվել են արտաքին պատի երեսապատման սալիկների 60 %-ը կամ մոտավորապես 150 մ² մակերես: Վնասվել են 12 պատուհանների ապակիները ընդհանուր մակերեսով 25 մ²: Վնասվել են 2 մետաղական դարպասները:
2	Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ	Անտառային, 13 Քարե շինություն, երկլանջանի տանիքով	Ֆիզիկական անձ	Վնասվել են մեկ հարկանի քարե շենքի պատերի երեսապատման սալիկները 50մ²: Ջարդվել են շենքի 3 պատուհանների, ինչպես նաև տարածքում գտնվող տաղավարի 5 (հինգ) պատուհանների ապակիները ընդհանուր մակերեսով 23.5 մ²: Ամբողջությամբ վնասվել են միջսենյակային 2 դռները 3.2մ², մուտքի դուռը 2մ²: Վնասվել է ներքին հարդարումը 70 մ² ընդհանուր մակերեսով: Արկի բեկորներից վնասվել է գույքը:
3	Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ	Երևանյան խճուղի, 3/3 (Ճոպանուղի) միահարկ կարկասային շինություն, երկլանջանի տանիքով	Համայնքային	Արկի բեկորներից և արկի պայթունի հարվածային ալիքից վնասված են 2 շենքերի արտաքին պատերը 67մ² ընդհանուր մակերեսով: Ամբողջությամբ վնասվել են դռները 8.6մ² և պատուհանները 5.3մ²: Վնասվել է շենքի ներքին հարդարումը 60 մ²: Ամբողջությամբ վնասվել են տարածքում գտնվող բացօթյա սրճարանի ծածկոցը, 4-

				հատ սառնարաններ, սրճարանի գույքը և 1 մարզասարք: Ինչպես նաև վնասվել են շենքի պահեստային մասում գտնվող 1 մեծ սառնարան և դահուկները 3 հատ:
4	Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ	Շահումյան փող. 20, <Առողջարան> ՓԲԸ, բազմահարկ (5 - հարկ) պանելային շենք երկլանջանի տանիքով	Իրավաբանական անձ	Արկի բեկորներից և պայթունի հարվածային ալիքից վնասվել են արտաքին պատերի երեսապատված քարերը 40մ² մակերեսով: Վնասվել են 30 պատուհաններ 130մ² ընդհանուր մակերեսով, 8 դռները և ներքին հարդարումը 60մ²:
5	Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ	Շահումյան փող. 19/19 Քարե և փայտե երեք հարկանի անավարտ շինություն	Ֆիզիկական անձ	Արկի բեկորներից վնասվել են 1-ին հարկի ճակատային մասի երեսապատման սալերը 6մ²: Վնասվել է պատուհանը 3.5մ²:
6	Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ	Շահումյան փող. 11 Երկհարկանի քարե շինություն, ծրարաձև տանիքով:	Ֆիզիկական անձ	Արկի բեկորներից վնասվել են ներքին և արտաքին պատերը: Ամբողջությամբ վնասվել է թիթեղյա տանիքը 430մ² մակերեսով, միջհարկային ծածկի 50 %-ը, վերնածածկը: Վնասվել են դռները, պատուհանները 18 մ² ընդհանուր մակերեսով և միջնորմերը: Վնասվել է ներքին հարդարումը 450մ²: Վնասվել է գույքը (1 դիվան, 2 բասկաթոռներ, աթոռներ և 2 սեղան, ջեռուցման մարտկոցները և այլն)
7	Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ	Շահումյան փող. 53, Երկհարկանի փայտյա շինություն, տանիքը երկլանջանի	Իրավաբանական անձ	Երկու հարկանի փայտյա տուն 65 մ² մակերեսով: Արկի պայթյունից վնասվել է տանիքի փայտյա ներքին երեսապատումը 8մ²: Արկի բեկորներից վնասվել են արտաքին պատերը, ներքին հարդարումը: Ամբողջությամբ վնասվել են պատուհանները 9մ² և 2 (երկու) մուտքի դռները 4մ²: Վնասվել են նաև տարածքում գտնվող տաղա-վարների ծածկի թիթեղները 6մ²:
8	Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ	Շահումյան փող. 27 Բնակելի հասարակական, քարե շենք Ծրարաձև տանիքով:	Համայնքային	Արկի բեկորներից և պայթունի հարվածային ալիքից կոտրվել են 4 հարկանի քարե բնակելի շենքի 31 պատուհանների մոտավորապես 70 մ² ապակիները: Վնասվել է 1 դուռ 1.8մ2 և 7մ2 բետոնե ներքին հարդարում:

9	Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ	Ձախափնյակ, 27Բ/6, Բազմա-հարկ(4-հարկ) պանելային շենք	Ֆիզիկական անձ	Արկի բեկորներից և պայթունի հարվածային ալիքից վնասվել է 1 պատուհան:
10	Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ	Երևանյան խճուղի, 3/3 Ճոպանուղու վերին հատվածի սրճարան, միահարկ, երկլանջանի տանիքվ շինություն, անջրաթափանց կտորից ծածկով	Ֆիզիկական անձ	Արկի բեկորներից վնասվել է սրճարանի տաղավարի ծածկը, հարվածային ալիքից՝ սրճարանի սպասքը
11	Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ	Ձախափնյակ, 27Ա/9 MERCEDES-BENZ թեթև մարդատար 36 RA 618	Սերժիկ Ջավենի Աղաբեկյան	Արկի բեկորներից վնասվել է մեքենայի արտաքին մասը՝ ապակիները:
12	Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ	Կեչուտ 7փ. 17/3 VAZ 2121 թեթև մարդատար 34 LT 088	Վլադիկ Պարույրի Համբարձումյան	Արկի բեկորներից վնասվել է մեքենայի արտաքին մասը, /ապակիներ, դուռ/ ամբողջովին շարքից դուրս է եկել շարժիչը, անիվները:

Նախնական գնահատմամբ ընդհանուր վնասը կազմում է 37.3 մլն դրամ:

Նախնական գնահատականներով Կեչուտի ջրամբարը չի վնասվել, որտեղ ջրի մեջ ընկել էր երկու արկ:

Առողջապահության ոլորտ

Ջերմուկի առողջության կենտրոնի ֆինանսավորման համար 2022 թվականի գլոբալ բյուջեով նախատեսվել է 81,357 հազար ՀՀ դրամ՝ որից ֆինանսավորվել է՝ 45, 391 հազար ՀՀ դրամ:

Կազմակերպությունը սպասարկում է 5965 բնակչության, ունի 5 մահճակալ, աշխատում են 24 բուժաշխատող:

Իրականացվել է 2,042 հազ. դրամի վճարովի ծառայություններ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում եղել է 2.084 հազ.դրամ: Եկամուտը կազմում է 47,433 հազար ՀՀ դրամ, որից ծախսվել է 43,837 հազար ՀՀ դրամ, մնացորդ՝ 3,596 հազար ՀՀ դրամ:

Առողջության կենտրոնում գործում է շտապ օգնություն 1 բրիգադ, առկա է 3 շտապ օգնության մեքենա: 2022թ.-ի ընթացքում պետական պատվերով բուժման և հետազոտման համար ուղեգրող հանձնաժողովի կողմից հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 5 քաղաքացի:

Նախատեսվում է Ջերմուկի ԱԿ ՓԲԸ-ում բացել անհետաձգելի բուժօգնության կայան:

Կորոնավիրուսի (Covid-19) դեմ պատվաստումների գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար բժշկական կազմակերպության աշխատակիցների հետ

իրականացվել է առցանց խորհրդատվություններ, և դասընթացներ: 26.09.2022թ.-ի դրությամբ իրականացվել 902 պատվաստում:

2022թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ սուվերեն տարածքի վրա Ադրբեջանի կողմից սանձազերծված ագրեսիայի ընթացքում Ջերմուկի ԱԿ-ն ամբողջ ծավալով կատարել է իր առջև դրված խնդիրները: Մինչև սեպտեմբերի 26-ը՝ /մարտական գործողություններ/, կենտրոնը սպասարկել է 92 զինծառայող: Կազմակերպությունն ապահովված է դեղորայքով և բժշկական անհրաժեշտության պարագաներով:

Ժամանակին կազմակերպվել է կենտրոնացված և մարդասիրական ճանապարհներով ստացվող դեղորայքի ստացում և բաշխում կազմակերպությունում հաշվառված առանձնահատուկ հիվանդություններով տառապող անձանց:

Բժշկական կազմակերպությունում առկա են բժիշկ մասնագետների կարիք, մասնավորապես՝ մանկաբարձ գինեկոլոգի և շտապօգնության բժշկի: Մասնագետ չլինելու պատճառով կազմակերպությունում դադարել է գործել գինեկոլոգիական բաժանմունքը:

Սոցիալական ապահովության ոլորտ

Սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի զինված ուժերի կողմից Ջերմուկ քաղաքի ուղղությամբ հրետակոծության պատճառով ժամանակավորապես տեղահանված քաղաքացիների կարիքները գույքագրվում է «Առաջնային կարիքի հավաքագրման հարթակի» միջոցով:

Քաղաքացին հայտում լրացնում է իր ընտանիքի կարիքները: Աջակցության անհրաժեշտություն ունեցող քաղաքացիների կարիքները փոխանցվում է մարզպետարանի և համայնքների սոցիալական աշխատողներին:

Ուսումնասիրված և ընդհանրացված կարիքների հիման վրա Հայկական կարմիր Խաչի ընկերության միջոցով անհրաժեշտ ապրանքները ներկրվում և տրամադրվում են համայնքներին: Համայնքների սոցիալական աշխատողները կատարում են բաշխման աշխատանքները և <<Առաջնային կարիքի հավաքագրման հարթակում» լրացնում են կարիքի բավարարման կարգավիճակը: Բոլոր 5 համայնքներում անհրաժեշտ օգնությունները տրամադրվել են: Օգնություն է ստացել 700 ընտանիք:

Ջերմուկից ժամանակավորապես տեղահանված քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրվում է նաև ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության ներքին տեղահանվածների էլեկտրոնային շտեմարան: ՀՀ Վայոց ձորի մարզում հաշվառվել է 1151 Ջերմուկից տեղահանված անձ:

Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ագրեսիայի պատճառով Վայոց ձորի մարզից զոհվել է 7 մարդ, որից 2 պայմանագրային զինծառայող: Հատուցումները ստանալու համար բոլոր գործերը ներկայացված են ՀՀ ՊՆ:

Գյուղատնտեսության ոլորտ

2022թ. սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի կողմից իրականացված ագրեսիայի հետևանքով մարզի համայնքներին համայնքնային սեփականություն հանդիսացող

/արոտավայր, խոտհարք, նոր գոյացող անտառային տարածք/ և գյուղացիական տնտեսություններին հասցվել են հսկայածավալ տնտեսական վնասներ:

Համայնքային սեփականությանը հասցված վնասները /արոտավայր, խոտհարք նոր գոյացող անտառային տարածք/- ամբողջությամբ այրվել են 1000-1100 հա արոտավայրեր, վնասի չափը կազմել է 18 800 000 ՀՀ դրամ, որից 200 հեկտարի վրա առկա էին վայրի ծառատեսակներ և թփեր՝ /կաղնի, թխկի, սոճի. հացենի, տանձենի, խնձորենի, շլորենի, ալոճենի և մասրենի 12-13 հազար հատ/ վնասի չափը կազմել է 9 000 000 ՀՀ դրամ:

Այրվել է նաև համայնքային սեփականություն հանդիսացող 80-85 հա խոտհարք, վնասի չափը կազմել է 12 000 000 -13 000 000 մլն ՀՀ դրամ:

Ընդամենը համայնքային սեփականությանը հասցված վնասները կազմել է 39 800 000 ՀՀ դրամ:

Գյուղացիական տնտեսություններին հասցված վնասը.

Ջերմուկի ամառային սարատեղիում եղել են 22 ֆերմերային տնտեսություններ:

- Կորսված անասնագլխաքանակ՝ մ. ե. կ 3465 գլուխ մայրեր – վնասը 155 925 000 ՀՀ դրամ, 2117 գլուխ գառներ – վնասը՝ 84 680 000 ՀՀ դրամ

-Գյուղ. մթերք /յուղ 1-1.5 տոննա, պանիր 13-14 տոննա/ - վնասը՝ 46 500 000 ՀՀ դրամ

-Գույք /կցորդով շարժական սենյակներ, հենասյուներ, վրաններ, երկաթյա ցանցեր և այլն/՝ վնասը կազմել է 20 600 000 ՀՀ դրամ

-Գյուղ. տեխնիկա՝ երեք միավոր - /Գազ-52, Գազ -53 և ՄՏԶ – 82 տրակտոր/ վնասը՝ ընդամենը 9 700 000 ՀՀ դրամ

Ընդամենը գյուղացիական տնտեսություններին հասցված վնասը կազմում է 317 405 000 ՀՀ դրամ

Ընդամենը համայնքային և գյուղացիական տնտեսություններին հասցված վնասը կազմում է 357 205 000 ՀՀ դրամ:

Բնապահպանության ոլորտ

Բնապահպանական վնասներ- Հայանտառ ՊՈԱԿ-ի Վայոց ձորի անտառ տնտեսության մասնաճյուղի անտառապետության 4-րդ պահաբաժնում առկա է 559 և 2-րդ պահաբաժնում 169 հրդեհված և մասնակի ոչնչացված ծառատեսակներ և թփեր /կաղնի, թխկի, սոճի. հացենի, տանձենի, խնձորենի, շլորենի, ալոճենի և մասրենի/:

Հրդեհի հետևանքով տեղահանվել են Կարմիր գրքի կենդանիները, իրենց բնակատեղիներից / Բեզոարյան այծ և Գորշ արջ /:

Բնապահպանական վնասի չափը կազմել է՝ 4-րդ պահաբաժին – 28 663 500 ՀՀ դրամ, 2-րդ պահաբաժին- 6 991 500 ՀՀ դրամ:

Ընդամենը բնապահպանական վնասները կազմում են 35 655 000 մլն դրամ:

Ընդամենը գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտներում վնասը կազմում է 392 860 000 ՀՀ դրամ:

Զեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան

Նիստը նախագահողը տվեց հնարավորություն օրակարգի հարցի վերաբերյալ հարցեր և առաջարկություններ ներկայացնելու:

Ներկայացված տեղեկատվության շուրջ տեղի ունեցան լայն քննարկումներ:

Հարց՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան

Պարոն Ա. Խաչատրյան Ջերմուկ քաղաքում ըստ համայնքի և մարզային հանձնաժողովների նախնական գնահատմամբ վնասի չափը կազմում է 37 277.0 մլն դրամ: Ի՞նչքան ժամանակում կարող եք հստակեցնել յուրաքանչյուր իրավաբանական և ֆիզիկական անձանց հասցված վնասի չափը, որպեսզի տրամադրվի փոխհատուցման գումարները:

Պատասխան՝ Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Խաչատրյան

Մենք համապատասխան մասնագետներ չունենք վնասի իրական չափը գնահատելու համար: Այդ աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է փորձագետներ կամ մասնագետներ հրավիրել կամ գուցե տենդեր հայտարարվի:

Հարցին առնչվող մեջբերում՝

Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազ Գ. Էլիզբարյան

Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով քննչական կոմիտեում վարույթ է հարուցվել: Այդ վարույթի շրջանակներում նաև ուսումնասիրվում է հասցված վնասը և փորձագետների կողմից կազմվելու է եզրակացություն հասցված վնասի վերաբերյալ: Կարող եք դիմել և ստանալ այդ եզրակացությունը:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝ Ա. Գրիգորյան.

Դա իդեալական տարբերակ կլինի: Այդ եզրակացությունը հիմք կընդունենք

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Ա. Կարապետյան

Տվյալ դեպքում փորձագետները հաշվարկում են հասցված վնասի չափը, բայց թե ինչքան գումար է անհրաժեշտ վերականգնման համար, նրանք չեն արձանագրի:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան.

Վնասի արժեքը, օրինակ կազմում է 12 մլն. դրամ, վերականգնման համար ենթադրենք կարող է ծախսվել 15 մլն. դրամ, դա արդեն ողջամիտ կլինի, քանի որ վերականգնման համար որոշակի լրացուցիչ աշխատանք է կատարվելու:

Միաժամանակ բոլոր միջոցները պետք է ձեռնարկենք, որպեսզի Ջերմուկ քաղաքի բնակիչները, սպասարկման ոլորտի աշխատողները հետ գան քաղաք, մարզ: Ի՞նչ առաջարկություններ ունեք այդ ուղղությամբ:

Վերջին հարցադրման վերաբերյալ իրենց կարծիքները հայտնեցին՝

Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Խաչատրյան

Հիմա խոսակցություններ են շրջանառվում այն մասին, որ ով Ջերմուկում է՝ նա օգնություն չի ստացել: Ես առաջարկում եմ օգնությունը տրամադրել միայն նրանց ովքեր Ջերմուկում են:

Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դ. Հարությունյան

Եղեգնաձոր համայնքում երբ օգնություն էին բաժանում, այն ստանում էին հիմնականում տղամարդիկ, որոնք քաղաքում մնալու փոխարեն արագ հեռացել էին համայնքից պաշտպանական գործողություններին մասնակցելու փոխարեն: Եթե Ջերմուկ քաղաքի բնակիչը չի մնում քաղաքը պաշտպանելու, ապա ոչ մի համայնքի բնակիչ չի գնա Ջերմուկը պաշտպանելու:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան.

Օգնություն ստանալու համար էլեկտրոնային հարթակը այնպիսին է, որ ստացողը կարող է լրացնել, թե որտեղից է ուզում օգնությունը ստանալ: Մենք առաջարկել ենք, որ այդ մոտեցումը փոխվի և միայն Ջերմուկից կարողանան ստանալ: Բայց այստեղ էլ խնդիր կա, գնում ստանում են և դուրս են գալիս քաղաքից: Հիմա մենք պետք է միջոցներ ձեռք առնենք, որ մնան քաղաքում:

ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության պետ Ա. Հակոբյան

Ստացված օգնությունների վերաբերյալ մենք տվյալներ ունենք, որ վաճառվում են խանութներում: Հանձնարարական է իջեցվել տարածքային բաժիններին, որ ստուգեն և համապատասխան միջոցներ ձեռք առնեն նման երևույթները բացառելու նպատակով:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան.

Հաջորդ խնդիրը կամավորների հարցն է: Լուրջ խնդիրներ կան մարդկանց սահմանների պաշտպանության գործընթացում ներգրավելու ուղղությամբ: Առաջին հերթին խնդիրը Ջերմուկին է վերաբերվում, հետո մյուս համայնքներին: Ջերմուկից ընդամենը 28 մարդ է համաձայնություն տվել Ջերմուկի պաշտպանությանը մասնակցելու համար: Պարոն Խաչատրյան, ոնց եք պատկերացնում ինչու՞մն է խնդիրը:

Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Խաչատրյան

Փորձել ենք նաև զինկոմիսարիատի միջոցով մարդկանց հավաքագրել, բայց չի ստացվում: Մարդիկ Ջերմուկում չեն, տեղափոխվել են տարբեր մարզեր: Չկա համապատասխան լծակներ, որ կարողանանք մարդկանց հավաքագրել:

ՀՀ ԱԱԾ ՎՁՄ վարչության պետ Կ. Միքաելյան

Խնդրի մասին ես կարող եմ ասել, որ Ջերմուկում չէինք նախատեսել աշխարհազորային ստորաբաժանում ստեղծել, նախատեսել էինք Արենիի ուղղությամբ, այն

էլ հակառակը ստացվեց: Հիմա բոլոր ուղղություններով էլ պետք է աշխատենք: Ջերմուկում չկար ստորաբաժանում, վերջերս ենք հավաքել մի քսան հոգի: Նախօրոք պետք է ունենայինք ստորաբաժանում, որ անհրաժեշտ պահին գործեր: Հիմա մարդ չկա, թողել ու հեռացել են:

Զորահավաքը և աշխարհազորը դրանք տարբեր են: Զորահավաքը իրականացնում են զինկոմիսարիատները համապատասխան հրամանի առկայության դեպքում: Աշխարհազորայինները կազմավորվում են համայնքներում: Ներկայումս շրջանառվում է օրենքի նախագիծ, որի ընդունման դեպքում, հրաժարվելու ենք եռամսյա հավաքներից, փոխարենը լինելու է 25 օրյա հավաքներ: Թե ի՞նչ կարգով է կատարվելու հավաքները, դեռ պարզ չի: Հայտնի է որ 7 օր տրամադրվելու է պարապմունքներին և վարժանքներին, 14 օր կատարելու են մարտական հերթապահություն, մնացած օրերը նախատեսված են կազմակերպչական աշխատանքներին: Համապատասխան իրավական ակտերի ընդունումից հետո ամեն ինչ հստակ կլինի:

ՀՀ ՊՆ Զ ԵՎ ԶՀԾ Վայոց ձորի մարզային տարածքային ստորաբաժանման ղեկավար Ա. Նահապետյան

Մենք 25 օրյա հավաքների վերաբերյալ հրաման չենք ստացել, երբ ստանանք այնպես կպլանավորենք, որ գյուղատնտեսական աշխատանքներին չխանգարի: Նպատակը այն է, որ բոլոր զինապարտները պարտադիր գոնե մեկ անգամ մասնակցեն հավաքին:

ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ Հ. Սարգսյան.

Ես առաջարկում եմ ներքին կարգով կազմակերպել հավաքի մասնակից քաղաքացիների խաղողի բերքը առանց խնդիրների գործարանների կողմից մթերումը, խոտհնձի ժամանակ համայնքապետարանը տեխնիկա տրամադրի խոտը հնձելու և հակավորելու համար: Սա, այսպես ասած, սահմանվի որպես «ներքին արտոնություն»:

Արենի համայնքի ղեկավար՝ Հ. Սահակյան.

Խաղող մշակել ասելով եկեք հասկանանք, որ աշխատանքները կատարվում են գարնանից սկսած մինչև բերքահավաքը: Միայն բերքահավաքով և մթերումով չի պայմանավորված խաղողի մշակումը, կան նաև այլ ընթացիկ աշխատանքներ: Խաղող ստանալու համար բոլոր աշխատանքները պարտադիր պետք է կատարվեն:

ՀՀ ՊՆ Զ ԵՎ ԶՀԾ Վայոց ձորի մարզային տարածքային ստորաբաժանման ղեկավար Ա. Նահապետյան.

Ես զեկուցագիր եմ գրել, որպես ամենաերկար սահման ունեցող մարզ, վարժական հավաքների ժամանակ մեր բնակիչները հավաքագրվեն մարզի սահմաններում իրենց ծառայությունը իրականացնելու նպատակով: Օրինակ՝ Արենի համայնքից հավաքագրված անձին նպատակահարմար չի այլ տեղ գործուղելը, մինչդեռ հենց մեր մարզում անձնակազմի խնդիր ունենք:

Հարց՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան

Պարոն Էլիզբարյան, եթե մարդը ծանուցում ստանա, բայց չներկայանա զինկոմիսարիատ, ինչ է նախատեսվում օրենքով:

Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազ Գ. Էլիզբարյան

Եթե վարժական հավաքներ անցկացնելու մասին առկա է որոշում, ապա արձանագրված է համապատասխան հոդված «Վարժական հավաքներից խուսափելը,,,», որը քրեական պատասխանատվություն է ենթադրում, բայց պատշաճ ծանուցման պարագայում: Ծանուցագրում կա նշում վարժական հավաքներից խուսափելու դեպքում անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության: Բայց այստեղ խնդիր կա պատշաճ ծանուցման հետ: Մարդիկ անձամբ չեն ստանում ծանուցագրերը, իսկ հարազատների կողմից ստացված ծանուցագրերի դեպքում այն կհամարվի ոչ պատշաճ ծանուցում և պատասխանատվության ենթարկելու հիմք չի կարող հանդիսանալ: Ավելին՝ մարդիկ կան, որ սոցիալական ցանցերում խորհուրդներ են տալիս, թե ինչպես խուսափել զորահավաքներից՝ կարևորը ծանուցագիրը անձամբ չստանալ և դուռը ծեծողի առաջ չբացել:

Եթե իրականում դա դառնա պետական մակարդակի այնպիսի բան, որ հավաքին մասնակցելը դառնա պարտադիր, կպլանավորենք, կհասկանանք ինչ անենք, բայց դրա համար որոշակի ժամանակ է պետք, որպեսզի հասնենք արդյունքների:

Հարց՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան.

Աշխատանքների կազմակերպման պարբերականություն, պլան, գրաֆիկ կա Ձեզ մոտ:

Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազ Գ. Էլիզբարյան.

Իհարկե կա, գրեթե ամենօրյա:

Հարց՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան.

Ուրեմն կխնդրեմ և համապատասխան գրություն էլ կուղարկեմ, որ ամեն շաբաթյա կտրվածքով մարզպետարանին տեղեկացնեք կատարված աշխատանքների մասին: Միաժամանակ առաջարկում եմ ակտիվացնել ժողովրդի հետ շփումները, պլանավորել, հանդիպումներ կազմակերպել բնակչության հետ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում:

Հաջորդը, որ կուզեի ավելացնել, մենք պետք է սկսենք նաև ապաստարանների հարցերով զբաղվել: Բազմաբնակարան շենքերի նկուղային հարկերը պետք է դատարկենք: Ի՞նչ եք կարծում:

ՀՀ ԱԱԾ ՎՁՄ վարչության պետ Կ. Միքաելյան

Շատ բարդ է լինելու: Մարդիկ ծախսեր են կատարել, միջոցներ են ներդրել, բողոքներ են լինելու, դժգոհելու են: Մենք չենք կարողանալու գործընթացը սահուն անցկացնել:

Հարց՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան.

Բայց ապաստարանների և թաքստոցների հարցը պետք է կարողանանք լուծել:

ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ Հ. Սարգսյան.

Բնակչության պատսպարում իրականացնելու համար, ամրագրում է հարկավոր, նախապես, խաղաղ ժամանակներում, հենց հիմա: Յուրաքանչյուր համայնք իր բնակչությանը ամրագրում է իր ունեցած պաշտպանական կառույցներում: Պաշտպանական կառույցը դա ապաստարանը չի, որտեղ սանհանգույց կա, մահճակալ կա, գրեթե ամեն ինչ կա, որ մարդը կսնվի, կքնի և ակերի պայթյունից չի վնասվի: Պաշտպանական կառույցը նվազեցնում է հարվածային ալիքը ու որոշակի չափով պաշտպանում է բեկորներից: Սա է, եթե մենք այդ էլ չենք անում, ուրեմն մեզ դնում ենք վերանալու խնդրի առաջ: Մարդկանց մեջ այն գիտակցությունն էլ չկա, որ ինքը պետք է իջնի նկուղ, գիտակցության մեջ առաջինը կա փախնելը: Սակայն իրականում պետք իջնի նկուղ, որպեսզի կարողանա ապրել: Նկուղային հարկն էլ պետք է մաքուր լինի: Այն բնակավայրերում, որտեղ նկուղային հարկեր չկան, օրինակ՝ Վարդահովիտ բնակավայրում, պետք է ունենան հարմարեցված կառույցներ: Եթե մարդու գիտակցության մեջ կա, որ ինքը կարտոֆիլի հոր պետք է փորի, որ կարտոֆիլը չմչանա, մի հատ էլ հոր իր հողամասում պետք է փորի, որպեսզի կարողանա ապրել, պաշտպանվել հարվածային ալիքից ու բեկորներից, ոչ թե նստի ավտոմեքենան ու փախնի: Ճանապարհով փախնելը առավել վտանգավոր է, ռմբակոծության ժամանակ կարող է զոհվել և ոչ ոք տեղեկություն չունենա այդ մարդու մասին: Այդ ամենին պետք է հասնենք խաղաղ ժամանակներում:

Երկրորդ կարևոր միջոցը ազդարարման համակարգերն են: Շչակների մասին է խոսքը: Հիմա, սոցիալական ցանցերում ցուցադրված կադրերում որ նայում ենք, Ուկրաինայում շչակները գործում են, ձայնը լսվում է կադրերում: Ստեփանակերտում պատերազմի օրերին էին շչակները տեղադրում: Եթե շչակի ձայնը մարդիկ լսեն ու պատսպարվեն, դուրս չգան բակ ու արկի պայթյունից զոհվեն, դա կլինի գերազանց արդյունք:

Հարց՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան.

Հիմա համայնքներում որտեղ չունենք շչակներ:

ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ Հ. Սարգսյան.

Մեր վարչությունը գրություն է ուղարկել բոլոր համայնքներին, թե որտեղ քանի հատ է հարկավոր, որպեսզի 500 մետր շառավղով կարողանանք ձայնային ծածկույթ ապահովել: Արենի համայնքը ամբողջությամբ փակել է իր ողջ տարածքը: Այսօր Արենի գյուղում վարժանք է իրականացվում և փորձարկվում է Երևանից կենտրոնական կառավարման համակարգի միջոցով շչակների միացման գործընթացը: Դպրոցն ու համայնքապետարանը դուրս են գալու իջնեն նկուղային հարկեր: Աշակերտների հետ տարվում է աշխատանք պատսպարվելու

վերաբերյալ, որպեսզի իրենք էլ տանը բացատրեն իրենց ծնողներին, որ շչակների ձայնը լսելուց իջնեն նկուղ, կարևոր չէ արկ կպայթի, թե չի պայթի:

Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դ. Հարությունյան

Բայց, եթե էլեկտրականությունը անջատվել է, շչակը ոնց է աշխատելու:

ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ Հ. Սարգսյան.

Սա երկրորդ հարցն է պարոն Հարությունյան: Սյունիքում 2020թ-ից հետո շչակները ձեռք բերեցին, եթե չեմ սխալվում ՄԱԿ-ի ծրագրով, գեներատորներ տեղադրեցին, որպեսզի կարողանան շչակները աշխատացնեն:

Մենք համայնք ունենք, որ շչակները ձեռք է բերել, բայց տեղադրման համար պետք է տենդեր հայտարարվի: Եթե հնարավորություն կա, ես չեմ տիրապետում տենդերների անցկացման կարգին, եթե հնարավորություն կա, հարկավոր է գործընթացը կազմակերպել առանց տենդերի:

Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Խաչատրյան

Մեր համայնքում տենդերը չի ստացվում, ուղիղ վաճառքով ենք գործընթացը անում, հիմա մասնագետները Վարդենիսում գործը կավարտեն և կգան Ջերմուկ:

ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ Հ. Սարգսյան.

Մենք հնարավորություն ունենք հենց հիմա, քանի խաղաղ է, մեր շչակները տեղադրել և միացնել կենտրոնական կառավարման համակարգին: Վաղը, աստված չանի, նմանատիպ իրադրության ժամանակ կհիշենք, որ էլի ժամանակը բաց ենք թողել: Եղեգիս համայնքում տեղադրված է միայն Շատին և Հորս բնակավայրում: Հորս բնակավայրի շչակը չի աշխատում: Եղեգնաձոր համայնքում Մալիշկա բնակավայրի համար ձեռք է բերվել, տեղադրման աշխատանքները շարունակվում են, Գլաձորում՝ աշխատանքները ընթացքի մեջ են, Վերնաշենում՝ շչակների քանակը ավելացել է, որ ձայնային ծածկույթ ապահովվի: Շչակների ձեռքբերման և տեղադրման աշխատանքներ կան, որ պետք է շարունակվեն: Ջերմուկ համայնքում աշխատանք պետք է արվի, Վայք համայնքը 8 շչակ ավելացրեց, կառավարման համակարգ ունի, բայց ընդհանուր Վայքին 17 հատ շչակ ևս անհրաժեշտ է:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Ա. Կարապետյան

Ընդամենը մարզին անհրաժեշտ էր 100 շչակ, այս պահին քանիսն է տեղադրված:

ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ Հ. Սարգսյան

Ներկա պահին տեղադրված է 55 շչակ:

Հարց՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան.
Մեկ շչակի արժեքը ինչքան է:

Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Խաչատրյան
Միջինը՝ 360 000 դրամ է:

ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ Հ. Սարգսյան
ԷՍ-40-ի արժեքն է 360 000 դրամ: Ավելի էժան շչակներ էլ կան: Վայքը տեղադրել է ԷՍ -28, որը ավելի էժան է:

Վայք համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյան
Մենք մեծ դժվարությամբ ենք ճարել, հիմա չկա դրանցից:

Հարց՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան.
Շչակներից բացի, ուրիշ ինչ հարցեր կան:

ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ Հ. Սարգսյան
Շչակների ու նկուղների հարցից բացի կա նաև հիդրանտների ու ջրաղբյուրների հարցը: Էլի ցավոտ հարց է: Հրշեջ մեքենան գնում է հրդեհ մարելու, ամբողջ գյուղում մի հատ ջրաղբյուր, ծորակ գոյություն չունի, որ հրշեջ մեքենան ջուր լիցքավորի: Ասում են մեքենան եկել է մեջը ջուր չկա: Հրշեջ մեքենան 2,2տ ջրով գնացել է, 3 րոպեում ցիստերնը դատարկվում է և վերալիցքավորելու հնարավորություն չկա: Ես առաջարկում եմ համայնքի ղեկավարներին ուշադրություն դարձնեն նշված խնդրին և բնակավայրերում կառուցեն հիդրանտներ և ջրաղբյուրներ:

Արենի համայնքի ղեկավար՝ Հ. Սահակյան.
Մի շատ կարևոր խնդիր էլ կա, դա տարահանման ճանապարհների հարցն է:

Հարց՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան.
Ընդհանուր տարահանման հետ մենք խնդիր ունենք: Ջերմուկից հետո մենք շատ լուրջ խնդիր ունենք: Մի ժամանակ Վայքը տարահանում էինք Ջերմուկ, հիմա Ջերմուկն է դարձել տարահանման ենթակա օբյեկտ:

Արենի համայնքի ղեկավար՝ Հ. Սահակյան.
Տարահանման պլանները պետք է փոխվեն:

Հարց՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան.
Ճանապարհների վիճակն, ոնց է, օրինակ՝ «Հոպիկներ» կոչվող տարածքով դեպի Ելփին տանող ճանապարհը:

Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դ. Հարությունյան

Նշված ճանապարհի վիճակը լավ է: Ես առաջարկում եմ ճանապարհային քարտեզ գծենք, մի օր բարձրանանք բոլոր ճանապարհների վիճակը ստուգենք:

Վայք համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյան

Ես համայնքի տարածքում գտնվող բոլոր երկրորդային ճանապարհները մաքրել եմ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան.

Ես առաջարկում եմ եկող շաբաթ անցնենք և ստուգենք ճանապարհների վիճակը:

Մեր խնդիրը ժողովրդի քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն է: Երկու մասով ենք մենք աշխատում, քաղաքացիական պաշտպանություն իրականացնել, ինչի համար մենք ենք պատասխանատու, իսկ զինվորականները երկրի պաշտպանությունը պետք է իրականացնեն: Ես առաջարկում եմ ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ հակառակորդի հարձակման դեպքում նրանք փորձելու են առաջինը ոչնչացնել էներգոհամակարգերը: Հետևաբար անհրաժեշտ է ձեռք բերել հոսանքի գեներատորներ: Համայնքներում ո՞վ գեներատորի խնդիր ունի: Եթե փող ունեք համայնքներում կամ բարերարների միջոցներով ձեռք բերեք գեներատորներ: Գեներատորների հարցը դարձրեք ակտուալ: Պաշարների հարցն էլ շատ կարևոր, կարողանում ենք դեղորայք, սննդամթերք ունենալ: Խնդրում եմ, ըստ համայնքների ներկայացրեք սեպտեմբերի 13-ից հետո իրավիճակը, ի՞նչ միջոցառումներ եք ձեռնարկել, հիմա ինչ փուլում ենք, ոնց եք պատկերացնում:

Արենի համայնքի ղեկավար՝ Հ. Սահակյան.

Սեպտեմբերի 13-ին, հրաման ստանալուց հետո, մեկ ու կես ժամվա ընթացքում 107 աշխարհազորայիններից 100-ը հավաքվել են (յոթ հոգին էլ ընթացքում եկան հասան), ստացել են զենքերը, առաջադրանքները, շատ կազմակերպված բարձրացել են դիրքեր: Դիրքերից իջել են սեպտեմբերի 20-22-ին, հրաման ստանալուց հետո:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան.

Այսինքն Դուք գոհ եք, աշխարհազորը կատարել է իր պարտականությունները: Աշխարհազորայինների քանակը կարող ենք ավելացնել:

Արենի համայնքի ղեկավար՝ Հ. Սահակյան.

Լիարժեք կատարել է: Բացի այդ աշխարհազորում ընդգրկվելու ցանկություն հայտնողներ կան, քննարկենք, եթե հնարավոր է՝ ընդգրկենք:

Տեղահանվածների մասով՝ 240 մարդ ընդունել ենք Ջերմուկից: Տարբեր մարդկանց, ՀԿ-ների միջոցով օգնություններ ենք ստացել, բաժանել: Հիմա աշխատանքներ ենք տանում, որ վերադառնան Ջերմուկ: Այս պահի դրությամբ շատ քիչ մարդ է մնացել, երևի մի հինգ հոգի: Հիմնականում վերադարձել են, մի երկու ընտանիք էլ տեղափոխվել են այլ մարզեր:

Ապաստարանների հետ կապված , նորից հանձնարարել եմ այցելեն և գույքագրեն, թե ինչ է պետք: Ելփինի մշակույթի տան նկուղային հարկը ուզում եմ ամբողջությամբ վերանորոգել, նաև Խաչիկ գյուղում ապաստարան կառուցելու կարիք կա: Հանձնարարել եմ, որ բոլոր տեղերում առաջին անհրաժեշտության ապրանքներով, դեղորայքով ապահովվեն: Միաժամանակ ցուցակագրել ենք, թե անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր ոք ուր է գնալու կամ ում տուն է գնալու, ամեն մարդ գիտի, թե ում է ընդունելու: Ցուցակով ամրագրված է: Մեզ հզորանալ է պետք: Սկզբնական շրջանում մեզ մոտ խուճապ կար: Բայց աշխարհազորայինները, որ եկան զենք ստացան ու բարձրացան դիրքեր, մարդիկ խաղաղվեցին: Մենք բոլորս տեսնում ենք, թե հակառակորդը ինչ հսկայական զենքեր է նուտակել սահմանին: Մենք նույնպես պետք է միջոցներ ձեռք առնենք սահմանը զենքով ապահովելու, գոնե մի երկու բան հանեն սահմանին տեղադրեն, մարդիկ իմանան, վերջը ժողովուրդ են, խոսում են: Հեռուստացույցով ցույց են տալիս, թե զենք չունենք, սա չունենք, դա չունենք: Հզորանալ է պետք ու այս հոգեբանական վիճակից պետք է դուրս գանք: Ինչքան շուտ, այնքան լավ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան.

Հզորանալը մեկ օրվա մեջ չի լինում: Հիմա պետությունը ջանք չի խնայում դիվանագիտական ճանապարհով հասնելու խաղաղության, ժամանակ շահելու և տնտեսությունը զարգացնելու համար:

Պարոն Հարությունյան ի՞նչ ունենք Եղեգնաձոր համայնքում: Ձեզ մոտ նույնպես սեպտեմբերի 13-ից նույն պրոցեսներն է եղել:

Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դ. Հարությունյան

Այո: Շտաբը կազմավորվել է: Բոլորը իրենց տեղերում են եղել: Սպասել ենք հրամանների, թե որ ուղղություններով գործենք:

Ջերմուկից ընդունել ենք 195 ընտանիք, 596 մարդ: Հիմնականում բարեկամների տներում են մնացել, մի քանի ընտանիք էլ վարձով է մնացել: Կարմիր խաչը երկու փուլով օգնություն է տրամադրել: Առաջին փուլում 150 մարդու է օգնություն տրամադրվել, իսկ երկրորդ փուլում՝ 180: Օգնությունները Եղեգնաձորում են տրվել, պետք է Ջերմուկում տրվեր, որ տեղում էլ մնային: Օգնություն ստացողների մեծ մասը տղամարդիկ էին:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան.

Ներկայացված տվյալները այսօրվա տվյալներ ե՞ն: Կարող եք կազմակերպել նրանց վերադարձը:

Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դ. Հարությունյան

Վերադարձը դժվար է կազմակերպել, բայց աշխատանք արվում է: Տվյալները հաշվառված օրվա են:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյան.

Պարոն Հարությունյան հանձնարարեք, որ այդ բնակիչների Ջերմուկ վերադառնալու ուղղությամբ աշխատանքները ակտիվացնեն:

Պարոն Մաթևոսյան Վայք համայնքում Ջերմուկից քանի մարդ կա:

Վայք համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյան

Մոտավորապես մի հազար մարդ էին ապաստանել Վայք համայնքում: Բայց ներկա պահին մի 4-5 ընտանիք են մնացել, մնացածը վերադարձել են:

ՀՀ ԱԱԾ ՎՁՄ վարչության պետ Կ. Միքաելյան

Օրակարգում գրված է «2022 թվականի սեպտեմբերի 13-ին ադրբեջանական ագրեսիայի հետևանքով մարզում ստեղծված իրադրության և ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ»: Դուք խոսում եք երկրորդային, երրորդային հարցերի մասին: Մեր առաջնային խնդիրը, դա անվտանգության և պաշտպանության խնդիրն է: Մենք պետք է պարզենք, թե մեր քաղաքացին ինչքանով է իրեն անվտանգ զգում և դրանից ելնելով նա որոշում է կայացնում՝ ոնց գործի, փախնի, թե ոչ: Մենք խոսում ենք՝ սա չունենք, դա չունենք: Վարչապետը, պաշտպանության նախարարը, գլխավոր շտաբի պետը հանդիպումներ են ունեցել, խորհրդակցություն է եղել, հարցրել են ինչի պակաս ունեք: Օրինակ՝ որ ասում են տեխնիկա չունենք: Տեխնիկա ունենք և ունեցել ենք, ուրիշ բան է, թե ոնց ենք կարողանում օգտագործել: Եկեք այս պահին ճշտենք, քանի տեխնիկա է խփվել, քանի տեխնիկա է վառվել: Սխալ գործողության հետևանքով տեխնիկա են գողանում, տրակտոր են հրդեհում: Մեր կորուստների 80 %-ը մեր սխալների հետևանք են, մեր զինվորի, պայմանագրայինի, սպայի, հրամանատարի: Դա առաջին հերթին: Ինչ ուզում եք արեք, եթե առաջին գիծը պաշտպանված չէ, մենք այստեղ ինչ էլ որ անենք, մեկ է, արդյունք չենք ունենա: Երկրորդ՝ մենք ստեղծեցինք աշխարհազոր, մենք պետք է բոլոր գյուղերում էլ, քաղաքներում էլ ստեղծեինք, կապ չունի սահմանամերձ է, թե սահմանամերձ չէ: Դրա համար էլ խնդիր առաջացավ: Եթե ունենայինք նորմալ աշխարհազոր պատրաստված, կարգապահ, կբարձրանային երկրորդ գիծ կնստեին: Հիմա արվում է, բան չունեմ ասելու, բայց պետք է շուտ արվեր:

Երրորդը՝ պատսպարման խնդիրների մասին խոսելիս, պետք է նկատի ունենանք, որ եթե քաղաքացին երեխա ունի, ինքը մտածելու է իր երեխային ոնց փրկի: Այսինքն՝ քաղաքացու հետ պետք է աշխատանք տարվի: Առաջին հերթին բոլոր պետական հիմնարկների աշխատողներով մենք պետք է օրինակ լինենք, հետո նոր մնացածներից պահանջենք: Բոլոր հիմնարկների ղեկավարներին բացատրենք, որ իրանք պետք է նախաձեռնությունը վերցնեն իրանց ձեռքը, եթե շենքում խուճապ է, պետք է գոնե մի պատասխանատու նշանակեն, որ հարցերը ինքը կարգավորի: Բոլոր հիմնարկների ղեկավարների, դպրոցի տնօրենների պատասխանատվությունը պետք է բարձրացնենք, որ ստացվի: Եթե մեկը գալիս է աշխատանքի և այս իրավիճակում չգիտի ինչով է զբաղվելու, չի ստացվի: Դպրոցի տնօրենը փախնում է, հիմնարկի պետերը փախնում են, ենթակաները

փախնում են, դա է սխալը: Յուրաքանչյուրն իր տեղում պետք է աշխատի: Եթե քաղաքացին մեկ օր մնաց, հաջորդ օրը հաց չկարողացավ առնի, ինչ է անելու, թողնելու է ու գնա: Մենք պետք է այնպես անենք, որ խանութները, փուռերը, բենզալցակայանները աշխատեն: Մարզի բնակավայրերում պետք է շտաբներ ձևավորվեն, որ անհրաժեշտության դեպքում հավաքվենք, գնահատենք իրավիճակը, տեսնենք աշխատանքները ոնց ենք բաշխում: Շատ ժամանակ մեխանիզմները չեն գործում, դրա համար էլ քաոսային վիճակ է ստեղծվում:

Ինչ վերաբերվում է օգնություններին, թող տանեն Ջերմուկում բաժանեն, այն պայմանով, որ այստեղ ես՝ հասնում է, չէ՝ չենք տալու: Մի քիչ էլ պետք է օրենքը գործի, մի քիչ էլ պետք է մենք խիստ լինենք, մի քիչ էլ՝ բացատրենք:

Հաջորդ խնդիրը՝ ակտիվացել է որոշ օտարերկրյա քաղաքացիների այցը մեր տարածաշրջան: Մենք բոլորին էլ հսկողության տակ ենք պահում, բայց եկել են Հայաստան օրինական փաստաթղթերով, մենք չենք կարող որևէ բան ասել: Բայց մենք կարող ենք տարածքում հենակետեր դնել, գյուղում էլ, եթե սահմանամերձ գյուղ է, չպետք է մենակ հույսներս դնենք զինվորականների վրա, գյուղի երկու կողմի վրա կարող ենք աշխարհազորայիններով ծառայություն կազմակերպել:

Մենք պետք է պարբերաբար հավաքվենք, քննարկումներ ունենանք այս հարցերի շուրջ, իմանանք ինչ է արվել ու պլանավորենք հետագա աշխատանքները: Նաև կապի խնդիրը կա, մենք պետք է ռացիաներ էլ ունենանք, բջջային հեռախոսները չեն աշխատելու: Պետք է ցանկացած իրավիճակում պատկերացում ունենանք, եթե կապ չեղավ գործողություն չի լինելու, եթե կապ չեղավ մեկս մյուսի տեղը չի իմանալու:

Ես վերջում նորից առաջարկում եմ, որ բոլոր տեղերում աշխարհազորային ունենանք: Մարդկային ռեսուրսի խնդիր ունենք, որ կարողանանք ուժերը ճիշտ տեղաբաշխել:

Արենի համայնքի ղեկավար՝ Հ. Սահակյան.

Ես առաջարկում եմ, որ հանձնարարեք դպրոցներում ցուցադրեն պատերազմի մասին ֆիլմեր, որոնք շատ ուսուցողական են, օրինակ՝ «Գնդակը վախենում է քաջից», երեխան մեկ անգամ տեսնի կողմնորոշվելու է, թե ինչ անի: Թվում է հասարակ բան եմ ասում, բայց շատ կարևոր բան եմ ասում:

Ամփոփելով նիստի աշխատանքները, մարզպետ Արարատ Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց նիստի մասնակիցներին և բոլորին մաղթեց արդյունավետ աշխատանք:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ **Ա.Գրիգորյան**